ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ԳՐԻԳՈՐ ԱՃԵՄԵԱՆ
(1933–2024)

Մխիթարութիւն է, որ ի տարբերութիւն Գուրգէն Մահարու՝ գրեթէ ամբողջութեամբ աքսորներով ու հալածանքներով ողբերգական կեանքի, նրա յետմահու՝ գրական ժառանգութեան հրատարակման ու հանրահռչակումն աւելի բարեբաստիկ եղաւ: Մահարու առաջին կնոջից՝ Օֆելիա Աւագեանից 1933ի Սեպտեմբերի 14ին ծնուած որդին՝ Գրիգոր Աճեմեանը, հօր մահից գրեթէ անմիջապէս յետոյ ձեռնամուխ եղաւ Գուրգէն Մահարու ստեղծագործութեան ու ընդհանրապէս գրական գործունէութեան ուսումնասիրմանն ու համակարգմանն՝ յընթացս մասնակցելով նաեւ կարեւոր հրատարակութիւնների: Հակառակ որ նա՝ ստացած կրթութեամբ ու մասնագիտութեամբ այնքան էլ կապ չունէր գրականագիտութեան հետ: Աւարտել էր Մոսկուայի Մենդելէեւի անուան քիմիկօ-արհեստագիտական ինստիտուտը: Բայց հօր ու նրա գրական ժառանգութեան հանդէպ որդիական պարտքը մղեց նրան ոչ միայն խորանալ նաեւ գրականագիտութեան մէջ, այլեւ թեզ պաշտպանել եւ ստանալ բանասիրական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան:

Շուրջ 40 տարի Աճեմեանը մամուլի ամենատարբեր հաւաքածուներում, արխիւներում, տարբեր անձանց հետ շփումների ու նամակագրութիւնների արդիւնքում հաւաքում, համակարգում եւ ի մի էր բերում Գուրգէն Մահարու հեղինակած ամէն մի ստեղծագործութիւն, յօդուած, նախադասութիւն, բառ ու նամակ, նաեւ՝ Մահարուն վերաբերող յօդուածներ, գրախօսութիւններ, կարծիքներ, տեսակէտեր: Այդ ընթացքում իր աշխատասիրութեամբ լոյս տեսան նախ՝ *Ծաղկած փշալարեր* վիպակը (1988), այնուհետեւ՝ Գուրգէն Մահարու՝ դեռ 1960ականներից սկսուած երկերի հնգատորեակի վերջին՝ հինգերորդ հատորը, *Այրուող այգեստաններ* (2004), *Երգիծանք եւ հումոր* (2004), *Անանձնային* (2004), *Արտամետեան գիշերներ* (2006), *Սիբիրական* (2011), *Չարենց-Նամէ* (2012) գրքերը, որոնցից իւրաքանչիւրն անպայմանօրէն ներառում էր որեւէ նոր, նախկինում անյայտ որեւէ գործ, հատուած, պարբերութիւն Մահարու գրական ժառանգութիւնից:

Սրան զուգահեռ Աճեմեանը պարբերաբար յօդուածներով ու հրապարակումներով հանդէս էր գալիս նաեւ մամուլում (նաեւ *Հայկազեան հայագիտական հանդէս*ում): Նրա յօդուածների մեծամասնութիւնը բանավիճային

բնոյթ ունի. դրանք միտուած են բացայայտելու ժամանակի գրական տարբեր գործիչների վերաբերմունքը Մահարու հանդէպ եւ վերհանելու կարեւոր ճշմարտութիւններ: Այդ յօդուածները յետագայում ի մի բերուեցին իր *Մահարիական* (2018) գրքում, որը շատ կարեւոր ներդրում դարձաւ մահարիագիտութեան մէջ: 2023ին լոյս տեսաւ Աճեմեանի *Լուսնի ցերեւացող կողմը (յուշեր, ուղեգրութիւն, արձագանգ)* ժողովածուն:

Գրիգոր Աճեմեանի՝ տասնամեակների այդ աշխատանքի պսակը եղաւ Գուրգէն Մահարու երկերի լիակատար ժողովածուն 17 հատորով («Անտարէս» հրատարակչութիւն), որի աշխատանքները մեկնարկեցին 2012ից: Հատորների հրատարակմանը զուգահեռ Գրիգոր Աճեմեանը շարունակում էր ուսումնասիրութիւններն ու պրպտումները, անընդհատ հարստացնում հատորների ծանօթագրական բաժինը, զուգահեռ կազմում էր Մահարու կեանքի եւ ստեղծագործութեան մատենագիտութիւնը, որը հսկայական աշխատութիւն է՝ մօտ 3000 էջ ծաւալով, նաեւ աշխատում էր *Գուրգէն Մահարին ժամանակակիցների յուշերում* գրքի վրայ:

Այս նուիրուածութիւնը, հետեւողականութիւնը, ջանքը, եռանդը, սէրը, որ Աճեմեանը դրեց Մահարու գրական ժառանգութեան հրատարակման ու մեկնաբանման գործում, յուզիչ էր անչափ՝ օրինակելի լինելուց զատ:

17 հատորների հրատարակման ամբողջ ընթացքում մշտապէս շփուելով, աշխատելով, նամակագրուելով ու յարաբերուելով Աճեմեանի հետ՝ կարող եմ վկայել, որ նրա կեանքի իւրաքանչիւր րոպէն ապրում էր Մահարու համար: Սա միայն որդիական պարտք համարելը չափազանց պարզ ու սովորական կը լինէր: Դա աւելի շատ նաեւ ողբերգութեան յաղթահարում էր՝ անհայր ու «ժողովրդի թշնամու որդու» պիտակով անցած մանկութեան, հօր հետ ոչ միանշանակ յարաբերութիւններով անցած երիտասարդութեան ողբերգութեան յաղթահարում, իր խոստովանութեամբ՝ Մահարու մեծութեանը ժամանակին այդքան էլ գիտակից չլինելու ողբերգութեան:

Աշխատանքային մի դրուագ աւելի պարզ պատկերացում կը տայ այն մեծ ողբերգութեան մասին, որ, այդուհանդերձ, հոգու խորքում ապրում էր Աճեմեանը: Երբ ամենատարբեր տեղերից ու ամենատարբեր մարդկանցից, երբեմն՝ ամենաանհնար ձեւերով հաւաքում էր Մահարու նամականին, մի օր հարցրի. «Հասցէատէրերի մէջ միայն քո անունը չկայ, քեզ նամակ չի՞ գրել Մահարին»: Այս հարցի պատասխանը անմիջապէս չեղաւ, այլ որպէս ծանօթագրութիւն արտացոլուեց երկերի համապատասխան հատորում: Աճեմեանը հօրից ստացել է չորս նամակ աքսորավայրից եւ մի նամակ ճամբարից (երրորդ մարդու միջոցով): Այդ նամակները չեն պահպանուել. մօր խորհրդով՝ աւելորդ քաշքշուկների, հարցաքննութիւնների եւ այլ՝ ժամանակին բնորոշ երեւոյթների մէջ չյայտնուելու համար Աճեմեանը այրել է դրանք: Այնինչ, իր՝ Մահարուն գրած աւելի քան 20 նամակները պահպանուել են. . .

Մահարու երկրորդ կնոջ՝ Անտոնինայի մահից յետոյ նրա տանը յայտնաբերուեցին Մահարու բազմաթիւ նոր ձեռագրեր, ամբողջական գործեր, նամակներ, որոնցից շատերն արդէն հրատարակուած հատորների ծանօթագրութիւններում նշուած էին որպէս չյայտնաբերուած կամ կորած գործեր:

Աճեմեանը նոր ոգեւորութեամբ անցաւ գործի՝ հրատարակութեան պատրաստելով Մահարու երկերի լրացուցիչ՝ 18րդ հատորը, որի վրայ աշխատում էր մինչեւ իր վերջին շունչը:

Մեր անձնական զրոյցներում Աճեմեանը, կատակով թէ լուրջ, միշտ ասում էր. «*Հատորները որ աւարտենք, ի՞նչ եմ անելու: Մի բան պիտի յորինենք, թէ չէ կը մեռնեմ*»: Եւ այն, որ Աճեմեանը մահացաւ հենց այն օրը, երբ վերջին վերջակէտը դրեց Մահարու 18րդ հատորում, այդ առումով չափազանց խորհրդանշական է եւ չափազանց առարկայականացնում է, թէ ի՛նչ է նշանակում աշխատել մինչեւ վերջին շունչը:

Այն, ինչ արեց Գրիգոր Աճեմեանը, ուղղակի փայլուն յենք է Գուրգէն Մահարու գրական ժառանգութեան ուսումնասիրութեան, գնահատման, արժեւորման համար, եւ գալիք տասնամեակներում Մահարու կեանքին ու գործին յարաբերուող իւրաքանչիւր ընթերցող, գիտնական, արուեստագէտ, վստահաբար, իր շնորհակալութիւնը կ'ասի Գրիգոր Աճեմեանին:

Գրիգոր Աճեմեանը մահացաւ 2024ի Յուլիսի 30ին, Երեւան:

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ (arqmenik@gmail.com)

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ
(1952-2024)

Հայ լեզուաբան Լալիկ Մնացականի Խաչատրեանը ծնուել է 1952ին, Կամօ քաղաքում (այժմ՝ Գաւառ): Նրա անցած ճանապարհն ուսանելի օրինակ է ուսանողութեան համար՝ մաքառելու, արարելու եւ գիտական բարձունքներ նուաճելու նպատակասլաց ձգտումով: 1982ից դասաւանդել է գրաբար, արդի հայերէն, հայոց լեզուի պատմութիւն, լեզուաբանութիւն՝ Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) հայոց լեզուի եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնում: 1983-85՝ սովորել է Մոսկուայի օտար լեզուների պետական դասընթացներում, գերմաներէնի մասնագէտի որակաւորմամբ: 1997ին՝ ստացել է բան. գիտ. դոկտորի գիտական աստիճան, 2003ին՝ պրոֆեսորի կոչում: 1997-2003՝ Հալէպի «Հայագիտական դասընթացներում» դասաւանդել է գրաբար եւ հայ հին գրականութիւն: 2007ին Սպահան քաղաքում անցկացրել է հայկական դպրոցների ուսուցիչների վերապատ-

բաստման դասընթացները: 2001-13 եւ 2015-16՝ եղել է ՀՊՄՀ հայոց լեզուի եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: 2019ից մինչեւ իր մահը վարիչն էր ՀՊՄՀ Լեզուաբանական հետազօտութիւնների գիտական լաբորատորիայի, որ կարճ ժամանակահատուածում զգալի յաջողութիւններ է արձանագրել հայագիտութեան ասպարէզում:

Ղեկավարել է 20 հայցորդների եւ ասպիրանտների գիտական աշխատանքներ: Մեծ էր պրոֆեսորի ներդրումը մագիստրոսական կրթական համակարգում նոր դասանիւթերի եւ ծրագրերի մշակման եւ նրանց դասաւանդման գործում:

Բաւական լայն են Պրոֆեսորի գիտական մտահորիզոնի սահմանները՝ հին հայերէն, բառերի ձեւաբանական իմաստի եւ արժեքի պատմական տեղաշարժեր, բառակապակցական իմաստաբանութիւն, հայոց լեզուի տեսութիւն, ընդհանուր լեզուաբանութիւն, փոխառութիւնների հարցեր, կաղապարաւորման տեսութիւն, պատմական քերականութիւն, բառարանագրութիւն եւն.: Առաւել ընդգրկուն է նրա ներդրումը բուհական համակարգի դասագրքաստեղծ ոլորտում. որով ժամանակակից մեթոդաբանութեամբ մատուցւում են դասընթացների բովանդակութիւնը եւ նպաստում հայագիտական առարկաների համակողմանի իրացմանը: Հրատարակել է շուրջ 200 գիտամեթոդական աշխատանք եւ գիտական յօդուած՝ հանրապետութեան եւ արտերկրի գիտական հանդէսներում (նաեւ *Հայկազեան հայագիտական հանդէս*ում): Այս ուսումնասիրութիւնները լուրջ ներդրում են նաեւ հայագիտութեան ասպարէզում:

Հեղինակ է մեծաթիւ գրքերի՝ *Տեղաշաժեր բառերի ձեւաբանական իմաստի մէջ* (1985), *Հայոց լեզուից 50 հարցարան* (համահեղ.՝ Պ. Բեդիրեան, Դ. Գիւրճինեան, 1992), *Խօսքիմաստային տարարժէքութիւն արդի հայերէնի կայուն կապակցութիւններում* (1996) *Հայոց լեզու. հարցարաններ ի ժողովածու* (համահեղ. Դ. Գիւրճինեան եւ ուրիշներ, 1997, 1998), *Գրաբարի տարարժէք բառերի բացատրական բառարան* (1998), *Հայոց լեզուի հարցաշարերի շտեմարան* (համահեղ. Լ. Եզեկեան եւ ուրիշներ, 2001-5), *Գրաբարի բացատրական բառարան* (2003), *Գրաբարի դասագիրք* (համահեղ.՝ Գ. Թոսունեան, 2004), *Հայոց լեզու, գրականութիւն* (Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ եւ ծրագիր, համահեղինակ, 2006), *Հայոց լեզու. դասագիրք 7րդ դասարանի համար* (համահեղ. Ֆ. Խլղաթեան, 2006), *Լեզուաբանութեան ներածութիւն* (2008), *Թելադրութեան բնագրերի ժողովածու* (համահեղ. Յովհաննէս Նազարէթեան եւ ուրիշներ, 2009), *Հեգաքրքրաշարժ լեզուաբանութիւն* (2010), *Գրաբարի ուսումնական բառարան* (2013), *Բառակազմական եւ ձեւաբանական կաղապարները ժամանակակից հայերէնում* (2014), *Բառաշխարհի գաղտնիքները. յունալատինական փոխառութիւններ* (2014), *Համեմատութիւն դարձուածային արտայայտութիւնները հայերէնում (5-16րդ դարեր)* (2015, համահեղինակ), *Հայոց լեզուի պատմութեան դասընթաց (գրային ժամանակաշր-*

ջան) (համահեղ. էդ. Մկրտչեան, 2016), *Ընդհանուր լեզուաբանութեան դասընթաց* (2017), *Լեզուաբանական տերմինների ուսումնական բառարան* (այն 2022ին արժանացել է Հայաստանի Թէքէեան մշակութային միութեան մրցանակի):

Նրա գիտամանկավարժական, հասարակական գործունէութիւնը բարձր է գնահատուել: Պարգեւատրուել է ՀՀ Լեզուի պետական կոմիտէի պատուոգրով, ՀՊՄՀ «Խաչատուր Աբովեան» յուշամեդալով (2003), «Ֆրիտիոֆ Նանսէն» յուշամեդալով (2008), Հայաստանի ազգային գրադարանի «Յակոբ Մեղապարտ» յուշամեդալով (2010), ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Մայրենիի դեսպան» մեդալով (2011), ՀՀ ԿԳՆ «Ոսկէ յուշամեդալ»ով (2012): ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրուել է նաեւ «Մովսէս Խորենացի» մեդալով (2022):

Լալիկ Խաչատրեանը մահացաւ 3 Նոյեմբեր 2024ին, Երեւանում:

ԱՇՈՏ ԳԱԼՍՏԵԱՆ (ash.galstyan@mail.ru)

ԱՆԱՀԻՏ ՉԱՐԵՆՑ
(1935–2024)

Գրականագէտ Անահիտ Չարենցը ծնուել է 1935ի Յունիսի 7ին, Երեւանում: Եղիշէ Չարենցի կրտսեր դուստրն էր: Ստալինեան բռնաճնշումների տարիներին՝ 1937ին, կորցրել է հօրը, միքանի ամիս անց մօրն՝ Իզաբելլա Մալունցեանին աքսորել են Ղազախստան: Աքսորից ազատուելուց յետոյ Իզաբելլան մնացել է Ղազախստանում, որտեղ էլ ամուսնացել է: Անահիտը մեծացել է մօրական տատի մօտ: 1953ին ընդունուել է Երեւանի բժշկական ինստիտուտ, մէկ տարի անց՝ Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունք: Այն աւարտել է 1959ին եւ աշխատանքի անցել Ռաֆֆու անուան միջնակարգ դպրոցում որպէս հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի: 1962-89՝ աշխատել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի բնագրագիտութեան բաժնում որպէս աւագ գիտաշխատող: Մասնակցել է Յովհաննէս Թումանեանի, Ռաֆֆու, Դերենիկ Դեմիրճեանի գիտական հրատարակութիւնների պատրաստման աշխատանքներին: 1963ին դասախօսել է «Գիտելիք» ընկերութեանը կից ժողովրդական համալսարանում: Մեծ ներդրում է ունեցել չարենցագիտութեան զարգացման բնագաւառում: 1955ից հետեւողականօրէն զբաղուել է Եղիշէ Չարենցի ձեռագրերի յայտնաբերման, ուսումնասիրման եւ ստուգաբանման աշխատանքներով: Մասնաւորապէս զբաղուել է Չարենցի՝ նկարչուհի Ռեգինա Ղազարեանի փրկած ձեռագրերի ուսումնասիրմամբ եւ վերծանմամբ, ո-

րոնք մնալով հողի տակ՝ խոնաւութիւնից դարձել են դժուարընթեռնելի: 1975ին պաշտպանել է թեկնածուական՝ «Եղիշէ Չարենցի ստեղծագործական վերջին շրջանը (1934-1937)» նիւթով: Աւելի ուշ ստացել է բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճան: Հրատարակել է *Չարենցի ձեռագրերի աշխարհում* մենագրութիւնը, իսկ 1983ին՝ Եղիշէ Չարենցի *Անտիպ եւ չհաւաքուած երկեր* մեծածաւալ ժողովածուն: Առանձին գրքոյկով հրատարակել է նաեւ Չարենցի *Կոմիտաս* պոէմը, պոէմների ժողովածու, Չարենցի ստեղծագործութիւնների *Հատընտիր*, Չարենցի երկերի չորսհատորեակը (1986) եւ *Վերջին խօսք* երկերի ժողովածուն (2007): Հեղինակել է 30ից աւելի յօդուածներ, որոնք տպագրուել են Երեւանի պետական համալսարանի *Չարենցեան ընթերցումներ-8* հատորում, 2003ին Քոլումբիայի (ԱՄՆ) համալսարանի կողմից լոյս ընծայած *Յեղափոխութեան պոէտը* յօդուածների ժողովածուում (խմբ.՝ Մարկ. Նշանեան), Քանատայի, Հոլանտայի գիտական հանդէսներում: Դասախօսութիւններով շրջագայել է ԱՄՆում, Քանատայում, Եւրոպայում: Քրոջ՝ Արփենիկ Չարենցի հետ, մեծ ներդրում է ունեցել Եղիշէ Չարենցի տուն-թանգարանի հիմնադրման եւ կայացման գործում, եղել է գիտական խորհրդի անդամ: 1985ին արժանացել է *Գրական թերթի* ամէնամեայ, 1988ին՝ Ամերիկեան միջազգային քոլէճի յատուկ, 2007ին՝ Եղիշէ Չարենցի 110ամեակին նուիրուած հանդիսութիւնների մրցանակներին, 2022ին՝ ՀՀ Երախտագիտութեան մեդալի:

Արփենիկ Չարենցը մահացել է 2024ի Յունիսի 29ին, Երեւանում:

ՀՀՀ

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՊԱՐԳԵՒ Ն. ՏԱՐԱԳՃԵԱՆ (1925-2023)

Վաստակաշատ հայ աւետարանական հովիւ, խմբագիր, Քրիստոնէական ջանից ընկերակցութեան երիտասարդաց գործակատար վեր. Պարգեւ Տարագճեան ծնած է Ալեքսանտրէթի Գըրըք Խան աւանը 1925ին, պատուելի Նազարէթ եւ տիկին Արուսեակ Տարագճեաններու յարկին տակ: Փոքր տարիքին կորսնցուցած է հայրը: Հալէպի Բեթէլ վարժարանի նախակրթարանը աւարտելէ ետք անցած է գործի ասպարէզ՝ Հայ Աւետ. բեթէլ եկեղեցիին մէջ իր աշխուժ ներկայութեան կողքին: Աւելի ետք, գրախանութ բացած է Հալէպ:

Պէյրութ տեղափոխուած ուսումնատենչ երիտասարդը, ամուսնանալէն ետք, բարձրագոյն վարժարանի համապատասխան վկայագիր ստացած է 1958ին. նոյն տարի մը յաճախած է Հայկազեան գոլէճ, հուսկ՝ պսակաւոր արուեստից ու աստուածաբանական վկայականներ ստացած Մերձաւոր Ա-

ռեւելքի Աստուածաբանական դպրոցէն եւ Պէյրութի Ամերիկեան համալսարանէն, 1965ին:

Հովուական եւ երիտասարդական գործունէութեան կողքին, վեր. Տարագճեան ծառայած է Մերձաւոր Արեւելքի հայ աւետարանական եկեղեցիներու միութեան հրատարակչական մարզին, միաժամանակ յօդուածներ ստորագրած առաւելաբար *Ջանասէր*ի մէջ՝ կրօնական, հայ աւետարանական, ազգային եւ հասարակական բազմազան նիւթերու շուրջ: Եղած է *Ջանասէր*ի, *Պապանեկան արձագանգ*ի եւ *Լոյս*ի խմբագիր՝ մինչեւ ընտանեօք ԱՄՆ մեկնումը 1974ին: Այնտեղ, ան շարունակած է իր ծառայութիւնը իբրեւ հովիւ Շիքակոյի Հայ Աւետարանական եկեղեցւոյ եւ Հիւս. Ամերիկայի Հայ Աւետ. միութեան պաշտօնաթերթ՝ *Ֆորում*ի խմբագիր: Միաժամանակ կազմակերպած է օժանդակութիւնը՝ պաքուեհայ ընտանիքներու, որոնք ապաստան փնտռած են Շիքակոյի շրջանին մէջ: 1985ին կը հետեւի Լոյոլա համալսարանի պատմական աստուածաբանութեան մագիստրական ծրագրին:

Վեր. Տարագճեան անգլերէնէ հայերէն թարգմանած է մանկապատանեկան գիրքեր: Հեղինակ է «Բողոքական շարժումը իր անցեալով ու ներկայով» յօդուածաշարքին (*Ջանասէր*, Յունուար 1967–Դեկտեմբեր 1969), ինչպէս նաեւ *Թոմպիկի արկածները* (իր մանկապատանեկան փորձառութեան մասին) (1969), *Armenian Evangelical Identity: Historical and Theological Perspectives* (1989), *Անփոխարինելի ժառանգութիւնը* (2004), *Աղօթագիրք – փոխասաց աղօթքներ* (2009), *Armenian Evangelical Movement: History, Faith and Mission* (2010) գիրքերուն:

Վերապատուելի Պարգեւ Ն. Տարագճեան մահացաւ 6 Ապրիլ 2023ին, Կլենտէյլ, Քալիֆորնիա:

ՎԵՐ. ՆՇԱՆ ՊԱԳԱԼԵԱՆ (nishan.bakalian@uaecne.org)